Ռուս մարդը դիտէ քայլել եւ տիրել իր սարկութեան մէջ:

Տիրել է ու շուարել իր մեծութիւնից:

Ի զուր չէ, որ ռուս հէքեաթների հերոս կարծեմ Իլիա Մուրոմեց իր սոսկավիթխար ոյժի ծանրութիւնից ոտքերով թաղւում է հողի մէջ եւ մեռնում. «Իմ ոյժի երեսից եմ մեռնում», ասում է հերոսը:

Ռուս ժողովուրդը իր առասպելական հերոսի պէս իր մեծութեան չարչարանքն է կրում, իր հողին իր Գողգոթան է: Ու իր տանջանքի մէջ, որ իր էութեան մի մասն է, նա յաւէտ աստուած է փնտռում, աստուածը իր սահմանների, որի սեւ հողերի մէջ իր հսկայական ոտքերն են թաղւում:

Բոլոր ազգերից միայն ռուս ժողովուրդն է, որ մարդկային ճակատագրի ամբողջ ողբերգութիւնը դիտէ ապրել ամէն օր, ամէն ժամ:

Այստեղ է նրա մեծութիւնն ու թշուառութիւնը: Եւ այս է պատճառը, որ նա յաւերժապէս կախուած է Աստծու փէշերից ու հաչիւ է պահանջում այս անկատար ու զարհուրելի աշխարհի համար:

Ռուսը ծնւում է աստուածախօս, ինչպէս բոլոր անապատների ժողովուրդներն, ուր երկինքը եւ երկիր դիտեն իրար չշնչալ:

Մաքսիմ Գորկին չի կեղծել, չի յերիւրել. ամէն մի ռուս անդրադէտ մուժիկ նախ եւ առաջ փիլիսոփայ է եւ ոչ արհամարհելի. իր հոգու վրայ կռացած, նա քրքրում է նրա խորքերը, եւ աստուածը գտնելու իր անդօրութեան մէջ նա յաճախ վայրագ ու ոճրագործ է կրօնական յափշտակութեան եւ սնոտիապաշտութեան յանցաւոր մղումով: Շշմեցուցիչ է Մ. Գորկու ինքնակենսագրութիւնը — «Մանկութիւնը»:

Ամբողջ ռուս գրականութիւնը մի ցաւագար ու անոգորմ ոգի ունի, որ օտարականները դժուարութեամբ են ըմբռնում, եւ յաճախ կարդում են, որպէս ախտաբանական փաստեր: Անդրէեւի մի շատ փոքրիկ պատմուածքը յիշեցի, որի վերնագիրն է «Անդունդ».

Ցաւուլան ո՛չ օրիգինալ է եւ ո՛չ բարդ, բայց լուծումը, վերջը...

Երիտասարդ ուսանողը իր սիրած ընկերուհու հետ երեկոյեան դէմ քաղաքից դէպի մօտակայ անտառ դրօսանքի է գնում: Սիրոյ զեղումն, բերկրանք, երկու մատաղ սրտերի տարփոտ թրթիռ: Անտառի մի կածանի մէջ յանկարծ մի խումբ սրիկաներ յարձակւում են նրանց վրայ, մի քանի հարուածով ուշաթափ գետին տապալում երիտասարդին, ու բռնաբարում են աղջկան, անոյշ, ուշակորոյս վիճակի մէջ ձգում, ու հեռանում:

Հասնում է գիշերը. երիտասարդը կամաց կամաց ուշքի է գալիս, լսում է սիրած աղջկայ նվվոցը, ցնցւում, յիշում է պատահածը եւ ճիգ անելով սողում է խաւարի մէջ, շօշափելով փնտռում ու գտնում է նվվացող աղջկան եւ...

Ընթերցողն սպասում է, որ երիտասարդը կը գրկի, կը սփոփի, կը դուրդուրայ այդ դժբախտ զոհի վրայ. ո՛չ. սիրող երիտասարդը կատարում է հրէշաւորը, այն, որ դուրս է գալիս մարդկային տրամաբանութեան ու խղճի սահմաններից եւ խելայեղութեան շրջանը թեւակոխում. նա էլ իր հերթին բռնաբարում է այդ կիսամեռ թշուառ, լկուած աղջկան, իր սիրած աղջկան:

Արդարեւ անդունդ: Այսպէս յաճախ ռուս հոգին՝ ինչպէս վառ շոգեմեքենայ, յանկարծ դուրս է նետւում գծից, տարւում է դաշտերով, դար ու փոսերով կրակ, ծուխ ու գոլորշի ժայթքելով եւ իր կատաղի վազքի մէջ փշրում, ոչնչացնում ամէն ինչ իր շուրջը: Դադարում են հոգեբանական սովորական օրէնքները, սկսւում է մղձաւանջը, կատարւում է անհնարին ոճիրը, որից յետոյ նա կը սկսի ինքզինքը երեսել, Աստծուն խնդրել այդ եղեռնի համար:

Անթիւ են այսպիսի փաստերը ռուս գրականութեան մէջ: Գերազանցապէս ռուս գրողը անշուշտ Դոստոյեւսկին է իր «Ոճիր ու պատուհասով» եւ Չեխով, այս անմոռան վարպետը ռուս հոգու: Եւ սրանց բոլորի երկերի մէջ իրապէս անդունդ է ռուս մարդու ներքինը. ինքզինքը տրորող, չարչրկող մի հոգի, որի լինելութիւնը դանդաղ է ու ցաւագին դալարումներով, վանդի կամքը թոյլ է, եւ որի ազգային նկարագիրն ու քաղաքական կառուցուածքը տակաւին վերջնական չէ, ու շշմեցուցիչ անակնկալներ ունի առջեւում: